ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Армения тоже активный участник в мировых миграционных процессов, где в период пост независимости государства число людей покинувших родину достигает 900.000 человек. Это предполагает, что решение проблемы и необходимость не превращения миграции в эмиграцию принуждают найти новые комплексные решения, что в свою очередь принуждает проведение глубокого анализа причин миграции и формирование ситуации сдерживающей эмиграцию, которая по настоящему труднейшая задача.

TATEVIK MKRTCHYAN

MIGRATION ISSUES IN RA

Key words: *emigration, labor migration, remittances, net passenger flows, foreign direct investments*

At the current stage of globalization of the world economy the progress of civilization is followed by the population migration which is the result of unemployment, poverty, hunger, geopolitical instability, wars, degradation of environment, etc.

Armenia is also an active participant in world migratory processes where after independence the number of the people who left their motherland reaches 900.000 people. It assumes that the solution and need not to transform the migration into emigration require new complex decisions that in turn requires carrying out deep analysis of the reasons of migration and formation of emigration constraining situation, which is a very difficult task for the present time.

ԱՐՓԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *շերտավորում, կենսամակարդակ, գործոններ, տնտեսապես ակտիվ, հիմնախնդիր, աղքատություն, բարեկեցություն*

Հոդվածում առանձնացրել և ուսումնասիրել ենք ՀՀ բնակչության շերտավորումն ըստ տնտեսական ակտիվության, մասնավորապես՝ տնտեսապես ակտիվ բնակչությունն ըստ զբաղվածների և գործազուրկների, իսկ զբաղվածներին էլ տարանջատելով ըստ վարձու աշխատողների, գործատուների, ինքնազբաղվածների և այլն: Որոշակի տեղ ենք հատկացրել նաև տնտեսապես ակտիվ բնակչության շերտավորմանն ըստ կրթական մակարդակի, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների: Բնակչության շերտավորման գնահատման առումով, հատկապես կարևորել ենք բնակչության եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունն ըստ քվինտիլային և դեցիլային խմբերի:

Բնակչության շերտավորումը, որպես համամարդկային կարևորագույն հիմնախնդիր, դեռևս պահպանում է իր արդիականությունը, որը, սակայն, տարբեր երկրներում

տարբեր ծավալներով է դրսևորվում: Այս հիմնախնդրի լուծման ուղիների բացահայտման անհրաժեշտության և հրատապության մասին է խոսում նաև այն փաստը, որ 2015 թ. տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մացանակի է արժանացել Էնգուս Դիտոնը՝ աղքատության, բարեկեցության և սպառման վերաբերյալ իր վերլուծությունների համար, որտեղ կարևորել են եկամուտների բաշխման և դրանց սոցիալ-տնտեսական բազմագործոնային կապերի բացահայտման հարցերը: Եկամուտների բաշխման անհամաչափության, բնակչության շերտավորման ուսումնասիրություններին նման բարձր գնահատական տալն արդեն իսկ ունի լուրջ տնտեսական նշանակություն՝ այս ուղղությամբ գիտական հետազոտությունների հետագա զարգացման առումով:

Վերջին տասնամյակներում ՀՀ բնակչության զգալի մասի աղքատացմանը զուգընթաց, շերտավորման կտրուկ աճը բնակչության մոտ ծնեց տեղի ունեցող գործընթացների նկատմամբ անարդարության զգացում: Վերջինս, ներգործելով հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա, ազդում է նաև տնտեսական սուբյեկտների վարքի, ուստի նաև տնտեսական զարգացման տեմպերի վրա: Այն հրատապ է դարձնում բնակչության շերտավորման կարգավորման, եկամուտների արդարացի՝ «սոցիալական արդարության» սկզբունքին համահունչ բաշխման հիմնախնդիրները լուծելուն ուղղված ռազմավարության մշակումը: Բնակչության շերտավորումը պայմանավորող գործոնների վերլուծությունը պետական սոցիալական քաղաքականության մշակման և իրագործման համար պատասխանատու անձանց ապահովում է կարևորագույն տեղեկատվությամբ, որը նրանց անհրաժեշտ է բնակչության կենսամակարդակի շերտավորումը մեղմելուն ուղղված պետական սոցիալական քաղաքականության բարելավման նպատակով:

Բնակչության շերտավորման բազմաչափ կատեգորիան գնահատվում է ըստ տնտեսական, քաղաքական և մասնագիտական ձևերի, որոնցից, մակրոտնտեսագիտության տեսանկյունից, կարևորվում է տնտեսական բովանդակությունը:

Տնտեսական շերտավորման հիմքում եկամուտների մակարդակի մեծությունն է, որի վրա առավելապես ազդում է բնակչության տնտեսական ակտիվությունը, քանի որ, ի վերջո, դա է ապահովում եկամուտների հիմնական մասը: Ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի՝ բնակչությունը դասակարգվում է տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ խմբերի: Որքան աշխատանքային ռեսուրսների մեջ մեծ է տնտեսապես ակտիվ, իսկ վերջինիս մեջ էլ՝ զբաղված բնակչության մասնաբաժինը, այնքան, այլ հավասար պայմաններում, շատ են նաև բնակչության համապատասխան հատվածի եկամուտները, հետևաբար՝ մեծ է հավանականությունը, որ նա չի դասվի աղքատ բնակչության շերտին, այլ կլրացնի միջին և բարձր եկամուտներ ունեցողների շարքերը: 2011–2016 թթ. կտրվածքով, ըստ ակտիվության և զբաղվածության տեսակի, ՀՀ աշխատանքային ռեսուրսների բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացարձակ թվով կրճատվել է ինչպես աշխատանքային ռեսուրսների, այնպես էլ տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածների և վարձու աշխատողների թիվը[1]: Սակայն, այդ տեղաշարժը պայմանավորված է ոչ

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 51, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2016 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 78:

միայն բնակչության կառուցվածքի փոփոխություններով (կենսաթոշակառուների մասնաբաժնի ավելացմամբ), այլև հիմնականում բնակչության ընդհանուր քանակի կրճատմամբ, ինչն առավելապես հետևանք է միգրացիոն հոսքերի: Ընդ որում, նշված փոփոխությունները բացասաբար են անդրադարձել տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների վրա, և համապատասխան ցուցանիշները 2011–2015 թթ. կրճատվել են 0.5-ական տոկոսային կետով, սակայն արդեն 2016 թ. որոշ չափով աճել են: Մինչդեռ զբաղվածների կառուցվածքում տեղի են ունեցել որոշ դրական փոփոխություններ: Այսպես՝ աճել է գործատուների և ինքնազբաղվածների թիվը, հետևաբար՝ տնտեսապես ակտիվ և զբաղված բնակչության կազմում նրանց մասնաբաժինը: Այդուհանդերձ, գործատուների թվի փոփոխությունը դրսևորել է խիստ անկայուն բնույթ. եթե 2014 թ. նրանց թիվը 2011 թ. համեմատ աճել է ավելի քան երկու անգամ, կազմելով 16 հազար մարդ՝ 2011 թ. 7.5 հազարի դիմաց, ապա 2015 թ. այն որոշակիորեն կրճատվել է՝ սակայն 2011 թ. համեմատ պահպանելով բարձր մակարդակ (9.7 հազար գործատու): Ուսումնասիրվող ժամանակահատվածում ինքնազբաղվածների քանակի 20.7 հազարով աճը կարող է պայմաններ ստեղծել վերջիններիս եկամուտների ավելացման և բնակչության շերտավորման մակարդակի որոշ չափով համահարթեցման համար: Թեև գործազուրկների թիվը 2011–2016 թթ. կրճատվել է 42.0 հազարով, այդուհանդերձ գործազրկության մակարդակը մնացել է բարձր (2016 թ. 3-րդ եռամսյակում՝ 18,1%)[1]: Միաժամանակ, պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը 3,3 անգամ պակաս է ԱՎԾ մեթոդաբանությամբ հաշվարկված գործազուրկների թվից, ինչը բնակչության շերտավորման գնահատման առումով անհամապատասխանությունների տեղիք կարող է տալ:

Բնակչության շերտավորման հարցում լուրջ դերակատարում կարող է ունենալ կրթական մակարդակը և, ըստ այդմ, զբաղվածությունը, քանի որ այլ հավասար պայմաններում, առավել կրթված մարդիկ կարող են ապահովել համեմատաբար բարձր եկամուտներ և համապատասխան սանդղակում զբաղեցնել ավելի պատվավոր տեղ: ՀՀ ԱՎԾ տվյալները վկայում են, որ տնտեսապես ակտիվ բնակչության կազմում առավելապես միջնակարգ ընդհանուր և բարձրագույն կրթությամբ անձինք են (մոտ 65%): Հատկանշական է, որ շատ քիչ մաս են կազմում նախամասնագիտական կամ արհեստագործական կրթության տեր մարդիկ (ընդամենն՝ 4%)[2]: Ըստ այդ տվյալների՝ գյուղական բնակավայրերում տնտեսապես ակտիվ բնակչությունն ավելի քիչ է, քան քաղաքներում: Միաժամանակ, 2014–2015 թթ. ընթացքում զգալի տեղաշարժեր են գրանցվել տնտեսապես ակտիվ բնակչության կազմում և կառուցվածքում: Նախ՝ շուրջ 60 հազարով կրճատվել է դրա ընդհանուր թիվը, ընդ որում կրճատման գերակշիռ մասը բաժին է ընկնում բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողներին՝ ավելի քան 42 հազար մարդ, որտեղ ավելի

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 51, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2016 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 79:

[2] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2016 թ. տվյալների հիման վրա, էջ 53:

մեծ տեղ է գրավում կանանց թվի կրճատումը (մոտ 25 հազար)[1]: Եվ եթե նկատի ունենանք, որ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը կրճատվել է ընդամենը 14 հազարով, ապա կարելի է ենթադրել, որ տնտեսապես ակտիվ բնակչության թվի կրճատումն առավելապես պայմանավորված է արտագաղթով, ինչը բնակչության շերտավորման առումով կարող է ունենալ երկակի ազդեցություն: Նույն միտումը շարունակվել է նաև 2016 թ. (2015 թ. համեմատ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կրճատվել է 80 հազարով)[2]: Եթե նկատի ունենանք, որ արտագաղթողների մի որոշակի մասը տրանսֆերտային փոխանցումներ է կատարում երկրում մնացողներին, ապա, այդ տեսանկյունից, նման գործընթացը դրական ազդեցություն կարող է ունենալ բնակչության տնտեսական շերտավորման վրա: Իսկ եթե արտագաղթում են ընտանիքներով և ըստ էության, դադարեցնում դրամական հոսքերը դեպի հայրենիք, ապա արդյունքում Հայաստանը զրկվում է բարձրորակ մասնագետներից, որոնք հիմնականում կազմում են բնակչության միջին խավը: Կրթական մյուս մակարդակներում գտնվող տնտեսապես ակտիվ բնակչության թիվը, բացառությամբ՝ հիմնական ընդհանուր և տարրական կրթություն ունեցողների, դարձյալ կրճատվել է, սակայն համեմատաբար փոքր չափով:

Բնակչության շերտավորման առումով, առանձնացրել ենք նաև պետական և ոչ պետական հատվածներում զբաղվածության հարաբերակցությունը: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ զբաղվածների ճնշող մասն աշխատում է ոչ պետական հատվածում (շուրջ 76%): Եվ թեև 2011 թ. համեմատ 2015 թ. պետական հատվածի աշխատողների քանակը գրեթե չի փոփոխվել (միջինում՝ ավելի քան 260 հազար աշխատող), այդուհանդերձ նրանց մասնաբաժինը զբաղվածների կազմում աճել է, քանի որ ավելի քան 100 հազարով[3] կրճատվել է ոչ պետական հատվածում զբաղվածների թիվը՝ 2011 թ. 915 հազարից 2015 թ. կազմելով ընդամենը 812,4 հազար:

Շերտավորման հիմնախնդրի կարևորության առումով, հետաքրքիր է բնակչության զբաղվածությունն ըստ տարբեր ոլորտների: Նման վիճակագրությունն առավել գնահատելի է, եթե դիտարկվում է ոչ միայն տվյալ ոլորտներում զբաղվածների մասնաբաժնով, այլև համապատասխան ոլորտի միջին աշխատավարձով: Վերջինս հնարավորություն է ընձեռում որոշ պատկերացում կազմելու ըստ զբաղվածության ոլորտների բնակչության շերտավորման մասին: ԱՎԾ փաստացի տվյալները վկայում են, որ 2015 թ. դրությամբ ՀՀ բնակչության շուրջ 35%-ը[4] զբաղված է գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության ոլորտներում, միջին եկամուտների առումով, վերջին շարքերում են (հանրապետական միջին ամսական անվանական աշխատավարձը 171,6 հազար դրամ է, իսկ վերոնշյալ ոլորտում՝ ընդամենը 113,1 հազար դրամ): Հետևաբար՝ այս ոլորտում զբաղված-

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 53:

[2] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 78:

[3] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2016 թ. տվյալների հիման վրա, էջ 56:

[4] Հաշվարկը կատարել է հեղինակը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2016 թ. տվյալների հիման վրա, էջ 66:

ները չեն կարող ապահովել միջին կենսամակարդակ և բնակչության շերտավորման տարակարգերում զբաղեցնել բարձր տեղ: ՀՀ-ում համեմատաբար բարձր եկամուտներ ապահովող ոլորտներն են հանքագործական արդյունաբերությունը (360,1 հազար դրամ), տեղեկատվությունը և կապը (329,5 հազար դրամ), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը (391,5 հազար դրամ), որտեղ գումարային արտահայտությամբ զբաղված է ընդամենը 44,1 հազար մարդ[1] (այսինքն՝ տնտեսության մեջ զբաղվածների 4,1%-ը): Հետևաբար՝ այս ցուցանիշը ևս բնակչության շերտավորման համահարթեցման առումով չի կարող էական դերակատարում ունենալ: Բնակչության շերտավորման գնահատման հարցում կարևոր է ոչ միայն աշխատավարձի ձևով ստացվող եկամուտը, այլև եկամուտների մյուս տեսակները՝ թոշակներ, կրթաթոշակներ, նպաստներ, այլ սոցիալական փոխանցումներ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ և այլն:

Տնտեսական շերտավորման մասին առավել պատկերավոր գնահատականներ կարելի է ստանալ ըստ քվինտիլային խմբերի և բնակավայրերի բաշխման ցուցանիշներից: ՀՀ ԱՎԾ 2015 թ. տվյալների համաձայն՝ միջինում աշխատավարձից ստացվող եկամուտները կազմում են բնակչության ընդհանուր եկամուտների շուրջ կեսը: Սակայն, ամենաաղքատ քվինտիլային խմբում այն եկամուտների ընդամենը 39%-ն է, մինչդեռ կենսաթոշակները և սոցիալական տրանսֆերտները՝ շուրջ 45%-ը: Ամենապարադոքսալն այն է, որ թեև տոկոսային արտահայտությամբ ամենաաղքատ և ամենահարուստ խմբերի սոցիալական տրանսֆերտները միմյանցից որոշակիորեն տարբերվում են, սակայն բացարձակ թվով դրանք գրեթե միմյանց հավասար են, նույնիսկ վերջիններիս մոտ այն ինչ-որ չափով շատ է (ամենաաղքատներն ամսական կտրվածքով, մեկ չափահաս անձին համարժեք ստանում են 11114, իսկ ամենահարուստները՝ 12713 դրամ սոցիալական տրանսֆերտներ): Զգալի տարբերություններ գոյություն ունեն նաև Երևանի, այլ քաղաքների և գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների եկամուտների հարաբերակցության, հետևաբար և՝ շերտավորման մակարդակների միջև: Երևանում մեկ անձի հաշվով ընդհանուր եկամուտները շուրջ 10 հազար դրամով գերազանցում են հանրապետական միջինը, ընդ որում, աշխատավարձի ձևով ստացվող եկամուտներն այստեղ ավելի մեծ մասնաբաժին են կազմում (ընդհանուր եկամուտների 63.5%-ը), իսկ ամենաաղքատների՝ վարձու աշխատանքից ստացված եկամուտները նրանց եկամտի 64.2%-ն են՝ գերազանցելով նույն ցուցանիշի միջին հանրապետական մակարդակը: Մինչդեռ, այստեղ ևս նկատվում է անհասկանալի իրողություն՝ սոցիալական տրանսֆերտների գծով Երևանում աղքատների ստացած գումարները համեմատաբար ավելի քիչ են (շուրջ 500 դրամով), իսկ ամենահարուստներինը՝ համեմատաբար ավելի շատ (շուրջ 1200 դրամով), դրա արդյունքում բնակչության ամենահարուստ շերտը Երևանում 3321 դրամով ավելի շատ սոցիալական տրանսֆերտներ է ստանում, քան ամենաաղքատը: Ընդ որում, բացի գյուղական բնակավայրերից, մյուս բոլոր բնակավայրերում ամենահարուստների ստացած սոցիալական տրանսֆերտները գերազանցում են մյուս բոլոր շերտերի ստացած տրանսֆերտները: Գյուղական բնակավայրերում վարձու աշխատանքի դիմաց ստացված եկամուտները

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 87:

համեմատաբար փոքր մասնաբաժին են կազմում՝ ընդհանուր եկամուտների մեջ 30.2%, ընդ որում, ամենաաղքատներինը եկամուտների ընդամենը 20.8-ն է: Առավել տարօրինակ է այն փաստը, որ բոլոր բնակավայրերում բնակչության առավել հարուստ շերտի՝ բարեկամներից ստացվող տրանսֆերտների մեծությունը մի քանի անգամ գերազանցում է առավել աղքատների ստացած գումարները (եթե հանրապետական միջինը կազմում է 4.7 անգամ, ապա Երևան քաղաքում՝ 12 անգամ):

Վիճակագրական տվյալները վկայում են նաև, որ 1-4 քվինտիլային խմբերում եկամուտների տարբերությունն աճում է աստիճանաբար և դանդաղ տեմպերով, մինչդեռ 5-րդ՝ ամենահարուստ խմբի եկամուտները 4-րդ խմբի համեմատությամբ աճում են կտրուկ ձևով, ինչը խոսում է շերտավորման խիստ անհամամասնության մասին: Հատկապես այդ տարբերությունն ակնհայտ է Երևանում, որտեղ 4-րդ և 5-րդ խմբերի եկամուտների տարբերությունը շուրջ 48 հազար դրամ է (մինչդեռ միջին հանրապետական ցուցանիշը 37 հազար դրամ է):

Ժամանակի ընթացքում բնակչության շերտավորման մակարդակի վրա կարող են որոշակի ազդեցություն ունենալ նաև եկամուտների աղբյուրների և դրանց հարաբերակցության փոփոխություններն ըստ դեցիլային խմբերի: Ընդ որում, ըստ դեցիլային խմբերի բնակչության եկամուտների դասակարգումն ավելի մեծ հնարավորություն է տալիս պատկերացնելու շերտավորման մակարդակը, քանի որ բնակչությունը բաժանվում է 10 խմբի (քվինտիլայինի 5 խմբի փոխարեն), հետևաբար՝ ավելի մեծ տեղեկատվություն է պարունակում: Եվ եթե նկատի ունենանք, որ վերջին տարիներին ՀՀ բնակչության շերտավորման գնահատման ուղղությամբ մասնագիտական որոշակի հետազոտություններ չեն կատարվել, որոնք կգնահատեին բնակչության տարանջատումն՝ ըստ աղքատ, միջինից ցածր, բայց ոչ աղքատ, միջին խավ, միջինից բարձր, բայց ոչ հարուստ և հարուստ խավերի, ինչպես նաև ԱՎԾ-ի կողմից նման կտրվածքով վիճակագրական տվյալներ չեն հրապարակվել, ապա բնակչության եկամուտների ըստ դեցիլային խմբերի դասակարգումն ամենահարմար սանդղակն է շերտավորման մասին հնարավորինս ամբողջական պատկերացում կազմելու առումով:

ԱՎԾ տվյալները փաստում են, որ 2004 թ. համեմատ գրեթե բոլոր դեցիլային խմբերում, ընդհանուր առմամբ (բացառությամբ 8-րդ՝ համեմատաբար հարուստ խմբի), աստիճանաբար աճել է աշխատանքի դիմաց ստացվող եկամուտների մասնաբաժինը: Սակայն, 2014–2015 թթ. որոշ խմբերում նկատվել է նաև հակառակ ուղղությամբ տեղաշարժ, հատկապես 1-ին՝ ամենաաղքատ դեցիլային խմբում: Մինչդեռ տրանսֆերտային եկամուտների մասնաբաժինը, թեև որոշակի տատանումներով, ունեցել է կրճատման միտում[1]: Այն, ընդհանուր առմամբ, իհարկե դրական երևույթ է, սակայն եթե հաշվի առնենք, որ աղքատների, հատկապես ծայրահեղ աղքատների համար դրանք ունեն կենսական նշանակություն, ապա այդ խմբերում նման իրավիճակը կարող է չափազանց բացասական հետևանքներ ունենալ:

[1] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 116–118:

Պատկերավոր ձևով ամենահարուստ և ամենաաղքատ տնային տնտեսությունների դրամական եկամուտների հարաբերակցությունը երևում է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ***Տասներորդ դեցիլային խմբի տնային տնտեսությունների դրամական եկամուտների հարաբերությունն առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների դրամական եկամուտների նկատմամբ՝ ըստ եկամուտների աղբյուրների 2004, 2008, 2013–2015 թթ.***[1]

Բնակչության շերտավորման մասին համեմատաբար ավելի ամբողջական և ճշգրիտ պատկեր է տալիս տնային տնտեսությունների՝ ըստ սպառողական ծախսերի ուսումնասիրությունը: Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի հարաբերակցությունն առաջին և տասներորդ դեցիլային խմբերում 2004–2015 թթ. ընթացքում նախ՝ աստիճանաբար բարելավվել է՝ 2004 թ. 9.5 անգամից 2009 թ. հասնելով 7.9 անգամի, այնուհետև դարձյալ աճել է և 2015 թ. կազմել 9.0 անգամ[2]: Նման վիճակագրությունը ևս փաստում է ՀՀ բնակչության տնտեսական շերտավորման բարձր մակարդակի մասին:

[1] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 119:
[2] Նույն տեղում, էջ 128:

АРПЕНИК МУРАДЯН

ЭКОНОМИЧЕСКАЯ СТРАТИФИКАЦИЯ НАСЕЛЕНИЯ В РА

Ключевые слова: *стратификация, уровень жизни, факторы, экономическая активность, проблема, бедность, благосостояние*

В статье выделены и изучены стратификация населения РА по экономической активности, частично: экономически активное население по занятым и безработным, а в свою очередь разделяя занятых на работающих по найму, работадателей и самозанятых. Определенное место предаставлено стратификации экономически активного населения по уровню образования, по видам экономической деятельности, по секторам. Для оценки стратификации населения особенно подчеркнули важность изучения доходов и расходов населения по квинтильным и децильным группам.

ARPENIK MURADYAN

ECONOMIC STRATIFICATION OF THE POPULATION IN THE RA

Key words: *lamination, living standards, factors, economically active, problem, poverty, welfare*

The article highlights and studies the stratification of the population of the Republic of Armenia by economic activity, especially: the economically active population by employed and unemployed, and dividing the employed into employees, employers and self-employed. A certain place is betrayed to the stratification of economically active population by the level of education, by economic activity and by sectors. To assess the stratification of the population, the importance of studying the incomes and expenditures of the population by quintile and decile groups was especially emphasized.

ՎԱՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՄԱՔՍԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *սակագին, մաքսատուրք, մաքսասակագնային կարգավորում, մաքսային քաղաքականություն*

Հոդվածում բացահայտվել են ՀՀ-ում մաքսասակագնային կարգավորման հիմնական խնդիրները՝ կապված ՀՀ ԵԱՏՄ անդամակցության հետ: Մասնավորապես՝ քննարկվել են ՀՀ ԵԱՏՄ մաքսատուրքերի միասնական դրույքաչափերին անցման երրորդ երկրներից ներկրվող ապրանքների գծով սպասվելիք թանկացումներին և բնակչության սոցիալական վիճակի վատթարացմանը վերաբերող խնդիրներ: Կատարվել են առաջարկներ նշված խնդիրների լուծման համար: